ՀՏԴ : 929:902/904 Ավետիսյան + 947.925

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, հնագետ Պավել Սեդրակի Ավետիսյանի 65-րդ տարեդարձը: Նա անուրանալի ներդրում ունի Հայաստանում հումանիտար ու հասարակական գիտությունների զարգացման գործում և առաջին հերթին իր մասնագիտության՝ հնագիտության ոլորտում: Մարդկային պարզ ու անմիջական խառնվածքը, կշռադատված ու փաստարկված խոսքը, նվիրումը իր գործին և մասնագիտությանը, երիտասարդական ջիղն ու ավյունը Պ. Ավետիսյանին դարձրել են սիրելի ու հարգված գործընկեր թե՛ իր հարազատ ինստիտուտում, թե՛, առհասարակ, ակադեմիական առավել լայն շրջանակներում: Գիտական անաչառությունն ու հստակ փաստերի վրա հիմնված սթափ մոտեցումները լավագույնս ընորոշում են Ավետիսյան–գիտնականին ու գիտության կազմակերպչին:

Պ. Ավետիսյանը ծնվել է 1957 թ. Թբիլիսիում, իսկ մանկությունն ու պատանեկությունն անցկացրել Թալինում: 1965–1975 թթ. սովորել է Երևանի Ռաֆֆու անվան թիվ 36 միջնակարգ դպրոցում, 1975–1980 թթ.՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո՝ 1980–1981 թթ., Պ. Ավետիսյանը կարճաժամկետ աշխատում է «Գիտելիք» ընկերությունում, որից հետո նրա աշխատանքային կենսագրությունն անցնում է հնագիտական հաստատություններում՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոն ու լաբորատորիա: 1993 թ. մինչ օրս Պ. Ավետիսյանն աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ 2006–2021 թթ. լինելով այդ ինստիտուտի տնօրենը, իսկ 2022 թ.՝ գիտական ղեկավարը: Միաժամանակ, տարիներ շարունակ նա հնագիտական առարկաներ է դասավանդում Երևանի պետական համալսարանում՝ նպաստելով մասնագիտական նոր սերնդի ձևավորմանը: Պ. Ավետիսյանի տնօրենության տարիներին Հնագիտության և ազգագրության ինստիտուտը լուրջ նվաճումների է հասել, որոնց շնորհիվ հաստատությունը ձեռք է բերել միջազգային համբավ: Նրա գիտական ղեկավարությամբ իրենց թեկնածուական թեզերն են պաշտպանել երիտասարդ ու խոստումնալից մի շարք հնագետներ: Նշանակալի գիտակազմակերպչական գործունեության համար

---

* *Ներկայացվել է 24. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

Պ. Ավետիսյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով (2011 թ.) և ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2014 թ.):

Պ. Ավետիսյանի գիտական ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջինն ընդգրկում է 30 տարվա ընթացքում իրականացված տարբեր հնագիտական հուշարձանների պեղումների և հետախուզական աշխատանքների մասին գործնական հրապարակումները: Երկրորդ խումբը միավորում է այդ աշխատանքների արդյունքում ի հայտ եկած տեսական ընույթի ուսումնասիրությունները:

Իր գիտական գործունեության ընթացքում Պ. Ավետիսյանը մասնակցել է բազմաթիվ հնագիտական հուշարձանների՝ դամբանադաշտերի և բնակավայրերի հետազոտությանը: Այդ աշխատանքներն իրականացվել են ինչպես հայկական, այնպես էլ միջազգային արշավախմբերով: Հիմնական դաշտային հետազոտություններն ուղղված են եղել բրոնզի և երկաթի դարերի (մ. թ. ա. մոտ 3500–500 թթ.) հուշարձանների ուսումնասիրմանը, ինչը և կազմում է Պ. Ավետիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքը: Աշխատանքների հաջորդ թիրախը եղել է նոր քարի և պղնձի դարերի (մ. թ. ա. մոտ 6000–3500 թթ.) հուշարձանների հետազոտությունը:

Պ. Ավետիսյանն իր գործունեությունը սկսեց Արագածի լանջերի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հետազոտությամբ: Մասնավորապես, նրա ղեկավարած առաջին պեղումներն իրականացան Մաստարայի ու Թալինի բրոնզի և երկաթի դարերի դամբանադաշտերում՝ 1980-ականներին: Ըստ էության, այս պեղումները ելակետ դարձան նրա հետագա գործունեության և գիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Պ. Ավետիսյանի տեսակետների զարգացման համար հատկապես կարևոր ասպարեզ դարձան Ագարակի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանի պեղումները, որոնք անցկացվեցին նրա ղեկավարությամբ 2000-ականներին: Բազմաշերտ ժայռափոր բնակավայրի և սրբավայրի հետազոտությունը էապես ընդլայնեց լանդշաֆտային հնագիտության վերաբերյալ առկա պատկերացումները:

Էական է Պ. Ավետիսյանի ներդրումը հայ-ամերիկյան «Արագած» ծրագրի աշխատանքներում 2000-ականների սկզբից մինչ օրս: Այդ ծրագրի միջոցով հայ հնագիտության պատմության մեջ առաջին անգամ կանոնավոր հետախուզական աշխատանքներ կատարվեցին ամփոփ մի տարածքում՝ Ծաղկահովտի գոգավորությունում, ինչպես նաև՝ պեղումներ այդ գոտու մի քանի կարևոր բնակավայրերում (Ծաղկահովիտ, Գեղարոտ և այլն):

Պ. Ավետիսյանի մասնակցությամբ իրականացված բրոնզ-երկաթեդարյան այլ հուշարձանների բազմաթիվ պեղումներից հատկապես հիշարժան են Լոռիբերդում, Արտաշավանում, Սիսիանում, Ծաղկասարում և Քարաշամբում կատարված աշխատանքները: Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի հետազոտության գործում արժեքավոր է Արագած լեռնահամակարգի հուշարձանների վերաբերյալ ամփոփ մենագրությունը՝ «Արագածը և իր հարակից շրջանները» վերնագրով, որը լույս է տեսել Օքսֆորդում 2007 թ. (անգլերեն) և ներկայում հայ հնագիտության առավել հղվող աշխատանքներից է:

Կարևոր է նաև Պ. Ավետիսյանի ավանդը նոր քարի և պղնձի դարի հուշարձանների հետազոտության բնագավառում: Այստեղ, առաջին հերթին, պետք է

նշել 2004 թ. Գոդեֆոր բնակավայրում նրա ղեկավարությամբ իրականացված հայ-ֆրանսիական արշավախմբի պեղումները: Բացի այդ, նա էական ներդրում ունի քննարկվող դարաշրջաններին վերաբերող այնպիսի հուշարձանների հետազոտման գործում, ինչպիսիք են Մասիս-բլուրը և Առատաշենը: Այս հետազոտությունները զգալիորեն լրացնում ու ամբողջացնում են Հայկական լեռնաշխարհում վաղ երկրագործական հանրույթների առաջացման և զարգացման օրինաչափությունների մասին ունեցած մեր պատկերացումները:

Ահա վերոհիշյալ դաշտային աշխատանքների հիման վրա էր, որ որոշարկվեցին Պ. Ավետիսյանի տեսական հետազոտությունների հիմնական թիրախները: Դրանցից ամենահիմնականը Հայաստանի վաղ անցյալի ժամանակագրության և փուլաբաժանման խնդիրն է: Մինչև 1980-ականների վերջերը հայ հնագիտությունն առաջնորդվում էր անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանի՝ Հայաստանի բրոնզի և երկաթի դարերին նվիրված հայտնի աշխատությամբ, որը լույս էր տեսել դեռևս 1964 թ.: Այդ ուսումնասիրության հրապարակումից անցել էին տարիներ, կուտակվել էր մեծաքանակ նյութ, որի հիման վրա հայ հնագետների նոր սերունդը ստիպված էր վերանայել ժամանակագրության և փուլաբաժանման ավանդական սանդղակները: Առաջին փորձերն այս ուղղությամբ կատարվեցին 1990-ականներին՝ Պ. Ավետիսյանի անմիջական մասնակցությամբ: Հետագա հետազոտություններում նա խորացրեց և տեսական բարձր մակարդակի հասցրեց նշված խնդրի ուսումնասիրությունը: Այդ աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին նրա թեկնածուական («Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը», Երևան, 2003), ապա և դոկտորական («Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում. սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների», Երևան, 2014) ատենախոսություններում: Պ. Ավետիսյանն իր տեսակետները զարգացնում էր ռադիոածխածնային մեծաքանակ տվյալների հիման վրա, ինչպես և համապատասխան տեսական ու մեթոդաբանական հենք ստեղծելով: Հայ հնագիտության մեջ առաջին անգամ նա քննարկվող խնդիրը ներկայացնում էր դարաշրջանների ընդհանուր զարգացումների, սոցիալական միջավայրի փոխակերպման և հաջորդափոխության դրսևորումների համատեքստում, ինչը, բնականաբար, ավելի արժանահավատ է դարձնում ժամանակագրության ու փուլաբաժանման մասին առաջ քաշված տեսակետները: Մարքսիստական՝ զուտ էվոլյուցիոնիստական տեսությունների փոխարեն նա առաջարկում էր կիրառել ժամանակակից սոցիոլոգիական մեթոդները, որոնք ենթադրել են տալիս ոչ միայն մշակութային միջավայրերի տրամաբանական հաջորդականությունը, այլև՝ համակեցությունն ու խաչասերումը: Այս ամենի արդյունքում Պ. Ավետիսյանը քննարկում է Հայկական լեռնաշխարհում կոմպլեքս հասարակության ձևավորման ու զարգացման խնդիրները, ցույց տալիս այն առանձնահատկությունները, որոնցով բնորոշվում է մեր տարածաշրջանը ընդհանուր հինարևելյան համատեքստում:

Հնագույն Հայաստանի անցյալի հիմնարար խնդիրների վերաբերյալ Պ. Ավետիսյանի հետազոտություններն աստիճանաբար հարցադրումների շեշտը տեղափոխում են մետահնագիտական դաշտ: Հայկական լեռնաշխարհի դիրքը հին աշխարհի և, մասնավորապես, հին Արևելքի համապատկերում ճշտելու համար հեղինակն անդրադառնում է «աշխարհ-համակարգային» տեսութ-

յանը, որի հիմնական դրույթների (սահման, բնագիծ, սահմանային գոտի, ֆրոնտիր, շփման գոտի) վերլուծությամբ նա հիմնավորում է այն թեզը, թե հնագույն աշխարհ-համակարգը մ. թ. ա. VII հազարամյակի առաջին կեսին կազմալուծվում է՝ սկիզբ դնելով ռեգիոնալ ընդգրկում ունեցող նոր պատմական համակարգերի, որոնց սերտաճման արդյունքում ասպարեզ էին մտնելու բրոնզեդարյան աշխարհ-համակարգերը:

Պ. Ավետիսյանի վերոհիշյալ ուսումնասիրություններին բնորոշ են առկա հնագիտական խնդիրների տեսականացումը, հստակ մեթոդաբանության և եզրույթաբանության կիրառումը, միջգիտակարգային ու միջմասնագիտական աշխատաոճը: Սրան գումարած, նրա հետազոտություններն առանձնանում են գիտական բարեխղճությամբ. դրանք հայ հնագիտությունը բարձրացնում են հիրավի միջազգային մակարդակի: Այդ մասին են վկայում Պ. Ավետիսյանի աշխատությունների հազարավոր հղումները ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Սրտանց շնորհավորում ենք մեր ուսուցչի տարեդարձը և նորանոր ձեռքբերումներ մաղթում նրան: Այսօր մեր երկիրն ու պետությունը, իրավամբ, կարիք ունեն այնպիսի նվիրյալների, ինչպիսին է գիտնական, քաղաքացի և ավագ գործընկեր Պավել Ավետիսյանը:

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 3 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: arsen.bobokhyan@sci.am

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանագիտության և լեզվաբանության խնդիրներ: Հեղինակ է 100 հոդվածի:
torqdal@yahoo.com